

ների «Երկերի ժողովածուներ» հրատարակելու համար — «ինքնուրոյն» թէ թարգմանական բովանդակութեամբ՝ «Երկերի ժողովածուներ», որոնցից շատերը Արմատական Բառարանի մէկ հատիկ պրակի արժէքն իսկ չունին :

Մտածե՛լ, որ դեռ տասնամեակներ առաջ պարզ անհատներ, երբեմն մինչեւ իսկ սեփական միջոցներով ու նախաձեռնութեամբ, նոյնպիսի, երբեմն եւ աւելի խոշոր հրատարակութիւններ են արել, իսկ այժմ գրանք վեր են թուում անգամ մեր «պետական» կարողութիւնից : Մ՛րչափ աղքատացել է մեր ժողովուրդը :

Աշխատութեան սկզբնական ձեռագիրը բաւականաչափ պարզ գրուած լինելով՝ վիճագրութիւնն էլ ընդհանուր առումով ընթեռնելի է : Նկատելի է սակայն, որ տեղ-տեղ ազատ են դուրս եկած բառերը, — անշուշտ սրբագրական մուրի ցածր որակի պատճառով :

Ահնրախ է, որ եթէ Արմատական Բառարանը լոյս տեսած լինէր ոչ թէ ձեռագիր-վիճագրութեամբ, այլ սովորական բառարանների նման՝ տպագրական ձեւով, նրա բովանդակութիւնն էլ գրեթէ երեք անգամ աւելի պակաս տեղ պիտի գրաւէր, ուրեմն եռապատիկ քիչ թուղթ պիտի գործածուէր, պահելով, ի հարկէ, ներկայ գիրքը (միջադիր), որ սովորական է շատ բառարանների համար (Պաղբաշեան եւայլն) : Այդ դէպքում ուրեմն Ա-Արկ բառերը ոչ թէ 696, այլ ընդամէնը մօտ 230 էջ տեղ պիտի պահանջէին, իսկ ամբողջ աշխատութիւնը՝ շուրջ 1400 էջ, որով եւ Բառարանը մեծապէս պիտի չահէր նաեւ արտաքինի կողմից :

Թերեւս այս չարիքը բարի ծնի այն տեսակէտից, որ յետագային պահանջ զգացուի 2-րդ

— արդէն իսկական — տպագրութեամբ լոյս ընծայելու բառարանը : Վերջինս հրատարակուած է, որչափ տեղեկացանք, շատ սակաւաթիւ օրինակներով միայն, բաժանորդագրութեան հիմունքներով : Լոյս տեսած պրակներին կցուած չէ, դժախտաբար, ռեւէ ծանուցում, որից կարելի լինէր տեղեկանալ եւ ընթերցողներին յայտնել բաժանորդագրութեան պայմանները :

Մնում է սպասել, որ Արմատական Բառարանի հրատարակութիւնը շուտով աւարտուի, գրաւելով իրեն արժանի տեղը Հայերէն բազմաբերի շարքում :

Արդէն իսկ լոյս տեսած պրակները իրենց մրայ են հրաւիրել զիտական աշխարհի ուշագրութիւնը : Ինչպէս հաղորդեցին թերթերը՝ Սորբոնի ուսուցչապետ Մէյէն իր մի դասախօսութեան մէջ մեծ գովասանքով է խօսել այս աշխատութեան մասին :

Նոյնպիսի կարծիքի է նաեւ հայագէտ պրոֆ. Մարքվարտ : Վերջինս ցաւում է, որ Արմատական Բառարանը, միմիայն հայերէն լեզուով լոյս տեսած լինելու պատճառով, անմատչելի պիտի մնայ եւրոպական շատ գիտնականների :

Այդ պակասը կը լրացուի անտարակոյս, երբ Արմ. Բառարանը ամբողջանալուց յետոյ նրա Ֆրանսերէն համառօտ թարգմանութիւնը լոյս տեսնէ, ինչ որ մտադիր է անել պրոֆ. Մէյէն, համաձայն լրագիրների տեղեկութեանց :

Բառարանը տպագրուած է ոչ թէ բոլշելիկեան, այլ հայկական ուղղագրութեամբ : Մի պարագայ, որ դերձ է պահում նրան գործածութեան անյարմարութիւններից :

Ա. Ա.